



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2010թ. երկրորդ եռամսյակի
գործունեության արդյունքների
վերաբերյալ

2010

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ կողմից 2010թ. երկրորդ եռամսյակում իրականացված գործունեության վերաբերյալ

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ինստիտուտ) գործունեությունն ընդգրկում է 4 հիմնական ոլորտներ՝ ստանդարտացման աշխատանքներ, համապատասխանության հավաստման, այդ թվում՝ կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքներ, լաբորատոր փորձարկումներ և ուսուցման կազմակերպում: Սույն հաշվետվությունն ընդգրկում է նշված ոլորտներում Ինստիտուտի կողմից 2010թ. ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեությունը, Ինստիտուտի ինստիտուցիոնալ կառուցվածքի վերափոխումները և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը:

1. Ինստիտուտի ինստիտուցիոնալ կառուցվածքի վերափոխումները

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2010թ.-ի մայիսի 3-ի N 316-Ա հրամանով հաստատված նոր կառուցվածքի և հաստիքացուցակի համաձայն՝ 2010 թվականի երկրորդ եռամսյակում աշխատանքներ են տարվել Ինստիտուտի կառուցվածքը և հաստիքացուցակը հրամանով սահմանվածին համապատասխանեցնելու ուղղությամբ: Մասնավորապես,

ա) Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման բաժինը միացվել է Ստանդարտների հետազոտման և կիրառման բաժնի հետ և ստեղծվել է Ստանդարտացման բաժին: Նշված երկու բաժինների գործունեությունը սերտորեն կապված էր միմյանց հետ և ըստ էության նպատակաուղղված էր միևնույն նպատակին՝ ստանդարտացման աշխատանքների կատարմանը: Ստանդարտների մշակումը մեծապես հիմնված է առկա ազգային և միջազգային ստանդարտների վրա, որոնք պահվում են ստանդարտների ազգային ֆոնդում: Միաժամանակ, կազմակերպություններին տեղեկատվական սպասարկումը հնարավոր է իրականացնել միայն այդ ստանդարտների խորը իմացության ու մեկնաբանման պարագայում, ինչը կատարվում է ստանդարտների հետազոտման բաժնի մասնագետների կողմից: Երկու բաժինների առկայությունը ստիպում է հաճախ միևնույն կառույցի ներքո կատարել տարանջատված գործողություններ, որոնք պահանջում են լրացուցիչ համակարգում: Արդյունքում, նախկին ընդհանուր 23 հաստիքի փոխարեն Ստանդարտացման բաժնում ներկայումս նախատեսված է 18 հաստիք, ինչը պայմանավորված է միևնույն բաժնում գործառույթների ճիշտ վերաբաշխման հանգամանքով:

բ) Տարածքային ստորաբաժանումների գործունեության օպերատիվ հսկողության ու առավել լավ համակարգվածության նպատակով ստեղծվել է Տարածքային ստորաբաժանումները համակարգող ծառայության պետի հաստիք, որը համալիր կերպով պատասխանատու է այդ ստորաբաժանումների թե՛ գործառնական, և թե՛ վարչական կառավարման համակարգման համար:

գ) Լաբորատոր փորձարկումների կենտրոնում կրճատվել է հաստիքների քանակը՝ նախկին 24 հաստիքի փոխարեն նախատեսվել է 17 հաստիք, ինչը պայմանավորված է Վանաձորի փորձարկման լաբորատորիայում գործարքային վարձատրման անցնելու և աշխատողների հետ ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման հանգամանքով: Ընդ որում, վերջինս ցույց է տալիս, որ գործարքային վարձատրությունը հանգեցնում է շահութաբեր գործունեության ապահովմանը, քանի որ աշխատողների մոտ ստեղծվում են տնտեսական շարժառիթներ: Մասնավորապես, 2010թ. 2-րդ եռամսյակում Վանաձորի փորձարկման լաբորատորիայի հավատարմագրման ժամկետն վերականգվել է, իսկ հասույթը շարունակել է աճել:

դ) Միաժամանակ, 3 խորհրդականի ու իրավաբանի հաստիքների փոխարեն նախատեսվել է մեկ իրավական հարցերով խորհրդականի և մեկ ստանդարտացման հարցերով խորհրդականի հաստիքներ: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ իրավաբանի մշտական հաստիքի պարագայում դժվար է վարձել լավ իրավաբան, իսկ իրավական հարցերով աշխատանքները մեծ ծավալ չունեն: Փոխարենը, խորհրդականի աշխատանքն առավել հիմնավորված է ու նպատակային:

ե) Նոր հաստիքացուցակի համաձայն, տարածքային բաժիններում վերանայվել են հաստիքները և յուրաքանչյուր բաժնից կրճատվել է մեկական հաստիք, իսկ Կապանի ստորաբաժանում՝ 2 հաստիք:

զ) Ուսումնական կենտրոնում մեկ առաջատար մասնագետի հաստիքը փոխարինվել է 1-ին կարգի մասնագետի հաստիքով՝ հաշվի առնելով առկա գործառույթների բարդության աստիճանը:

է) Քարտուղարությունում մեկ առաջատար մասնագետի հաստիք փոխարինվել է գլխավոր մասնագետի հաստիքով, իսկ մեկ 1-ին կարգի մասնագետի հաստիք կրճատվել է:

թ) Վարչատնտեսական բաժնում կրճատվել է մեկ հավաքարարի հաստիք՝ անհրաժեշտության բացակայության պատճառով:

Նշված բոլոր փոփոխությունների արդյունքում նախկին 152 հաստիքի փոխարեն սահմանված Ինստիտուտի հաստիքակազմը ներկայումս պարունակում է 133 հաստիք: Հստակեցվել են նաև աշխատավարձի դրույքաչափերը, ինչի շնորհիվ աշխատավարձի ֆոնդը որոշ չափով կրճատվել է: Լրացուցիչ ծառայությունների անհրաժեշտության դեպքում Ընկերությունը համապատասխան մասնագետների հետ կնքում է կարճաժամկետ ծառայությունների մատուցման պայմանագրեր:

2. Ստանդարտացում

Առաջին կիսամյակում հաստատվել է «Ստանդարտների մշակման ծառայությունների 2010 թվականի ծրագիրը»՝ ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 608-Ն որոշում և դրա հիման վրա 2010 թվականի հունիսի 25-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Ստանդարտների ազգային ինստիտուտի միջև կնքվել է N US/2010-1 պայմանագիր՝ սույն թվականի 1-ին կիսամյակում պետական բյուջեից նախատեսելով 5500.0 հազ. դրամի ֆինանսավորում հետևյալ գործառույթների համար.

1. Ազգային ստանդարտների մշակման աշխատանքներ՝ 3000,0 հազ. դրամի

1-ին կիսամյակում մշակվել է թվով 25 ազգային ստանդարտների նախագծեր, որոնցից 18-ը ընդունվել է գիտատեխնիկական խորհրդի կողմից և ներկայացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն հաստատման, իսկ 7-ը՝ ներկայացվել է գիտատեխնիկական խորհուրդ:

2. Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում՝ 1200,0 հազ. դրամի

2.1 Միջազգային (ԻՍՕ), եվրոպական (ԵՆ) և միջպետական (ԳՕՍՏ) ստանդարտների նախագծերի փորձաքննություն

2.2 Միջազգային և միջպետական ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկություն

2.3 ԱՊՀ երկրների ստանդարտացման միջպետական խորհրդի, ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ) և Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ՍԵՆ) աշխատանքների կազմակերպում:

3. Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքներ՝ 1024,0 հազ. դրամի

3.1. Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ֆոնդի համալրում և հաշվառում

3.2. Ընդունված ազգային ստանդարտների գրանցում

3.3. Հայաստանի Հանրապետությունում գործող ազգային ստանդարտների ֆոնդի վարում

3.4. Հայաստանի Հանրապետության կազմակերպությունների տեղեկատվական սպասարկում

3.5. «Ստանդարտ» տեղեկատվական-որոնման ավտոմատացման համակարգի ներդրում

3.6. Հայաստանի Հանրապետությունում գործող ստանդարտների ամբողջ տեքստի տվյալների բազայի (էլեկտրոնային տարբերակների) ստեղծում, հաշվառում և պահում

3.7. ԱՀԿ անդամ երկրների տեղեկատվական (հարցման) կենտրոններին համապատասխան հարցումների տրամադրում

3.8. Ազգային ստանդարտների կատալոգի, եռամսյակային տեղեկատուի նախապատրաստում և հրատարակում:

4. Գնման ենթակա նյութեր՝ 276,0 հազ. դրամ

Ձեռք են բերվել նյութեր և գրենական պիտույքներ՝ 276.0 հազ. դրամի:

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտում կազմակերպվել է Ստանդարտացման գիտական խորհրդի հանդիպում, որտեղ քննարկվել է ՀՀ Վարչապետի մոտ 2010թ. հունվարի 22-ին տեղի ունեցած խորհրդակցության N 11.3/[30954]-10 արձանագրային հանձնարարականի 3-րդ կետի համաձայն մշակված ՀՍՏ «Դպրոցական և ընդհանուր տետրեր. Ընդհանուր տեխնիկական պայմաններ» ստանդարտը, որն այնուհետև ընդունվել է գիտատեխնիկական խորհրդի կողմից:

1-ին կիսամյակում ընդունվել և հաստատվել է 18 ազգային ստանդարտ, իսկ իսկ 7-ը՝ ներկայացվել է գիտատեխնիկական խորհուրդ:

2010 թ. 2-րդ եռամսյակում ակտիվ աշխատել են հետևյալ տեխնիկական հանձնաժողովները.

ՏՀ 1 «Էներգետիկա»

ՏՀ 3 «Մրգային և բանջարեղենային արտադրանք»

ՏՀ 9 «Քիմիական արտադրանք»:

Կազմակերպվել է ՏՀ 3 հանձնաժողովի հերթական նիստը (Արձանագրություն N 4 առ 12.05.2010 թ.), որի ժամանակ քննարկվել է մրգերում և բանջարեղենում անագի, կադմիումի, արսենի, սորբինաթթվի և բենզոական թթվի առաջադեմ ստանդարտացված միջազգային փորձարկման մեթոդների կիրառումը ՀՀ-ում:

Քննարկվել է նաև մրգերի, բանջարեղենի և սնկերի վերամշակման տեխնոլոգիական գործընթացներում ստանդարտացված տերմինների կիրառումը:

ՏՀ 1 հանձնաժողովը մշակել է ազգային ստանդարտներ, որոնք ներկայումս փորձաքննում են ինստիտուտի մասնագետները: Նշված հանձնաժողովի նախագահը առաջարկել է անդամակցել Միջազգային էլեկտրատեխնիկական կազմակերպությանը (ՄԷԿ), ինչը Ստանդարտների ազգային ինստիտուտի և այլ շահագրգիռ կողմերի հավանությանն է արժանացել:

ՏՀ 9 հանձնաժողովի մասնագետները Ստանդարտացման բաժնի աշխատակիցների հետ համատեղ ուսումնասիրում են քիմիական ոլորտում գործող միջպետական ստանդարտների (ՉՕՍ) ֆոնդը՝ առաջադեմ միջազգային ստանդարտներով փոխարինման նպատակով: Ներկայումս այդ ուսումնասիրության արդյունքում նախապատրաստվում է միջազգային ստանդարտների ցանկ, որը պետք է կիրառվի ՀՀ-ում:

Ստանդարտացման բաժինը ՏՀ 2, ՏՀ 4, ՏՀ 5, ՏՀ 6, ՏՀ 7 և ՏՀ 8 հանձնաժողովների նախագահների հետ կատարում է կազմակերպչական աշխատանքներ՝ նշված հանձնաժողովների գործունեությունը վերականգնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպել է միջազգային և եվրոպական ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկության աշխատանքներ, որի ընթացքում 20 միջազգային և եվրոպական ստանդարտների նախագծեր անցել են փորձաքննություն և համաձայնեցվել են ՀՀ-ում բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ: Կատարվել են վերլուծական աշխատանքներ նոր ընդունված ԻՍՕ և ԵՆ ստանդարտները ՀՀ-ում կիրառման վերաբերյալ: Նախապատրաստվել են տնտեսության տարբեր ճյուղերի համար միջազգային և եվրոպական ստանդարտների ցանկեր, որոնց կիրառման վերաբերյալ ՀՀ-ում կարծիքներ պետք է հավաքվի բոլոր շահագրգիռ կազմակերպությունների կողմից:

2009-2010 թվականին ՀՀ-ում ներդրված եվրոպական ստանդարտների վերաբերյալ՝ թվով 53 հատ, տեղեկատվություն է տրամադրվել Ստանդարտացման եվրոպական կոմիտեին:

Փորձաքննության են ենթարկվել 8 ՀՀ կառավարության որոշման նախագիծ, 3 ստանդարտի նախագիծ:

Ինստիտուտի համապատասխան մասնագետներն ընդգրկվել են «Ստանդարտացման մասին» և «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքների նոր նախագծերի մշակման աշխատանքային խմբում:

Հաշվետու ժամանակահատվածում Ինստիտուտի 2 աշխատակից մասնակցել են Բրյուսելում կայացած «Եվրոպական ստանդարտացման» վերաբերյալ սեմինարին:

Ինստիտուտի կողմից կարևորվում է բովանդակային գործունեությունը, ակտիվ մասնակցությունը միջազգային ստանդարտացման աշխատանքներին ԻՍՕ և ՍԵՆ կազմակերպությունների շրջանակներում, որի շնորհիվ ի վերջո հնարավոր կդառնա ընտրվել ԻՍՕ-ի Խորհրդի կազմում որպես Խորհրդի անդամ: Այդ նպատակով, հատկապես կարևորվել է Հայաստանի և Ինստիտուտի ներկայացվածությունը միջազգային ստանդարտացման կառույցներում՝ ԻՍՕ-ում, ՍԵՆ-ում, ԴԵՎԿՕ-ում, Միջպետական խորհրդում (EASC) և այլն:

2-րդ եռամսյակում Ստանդարտների ազգային ֆոնդը համալրվել է 550 միջազգային (ԻՍՕ), 283 Եվրոպական (ԵՆ), 6 միջպետական (ԳՕՍՍ), 89 Ռուսաստանի Դաշնության (ԳՕՍՍ Ռ) և 18 Հայաստանի Հանրապետության (ՀՍՍ) նոր ստանդարտներով: Ստանդարտների էլեկտրոնային տարբերակները արխիվացվել են, իսկ թղթի կրիչով ստանդարտները հաշվառման են վերցվել մատյանում:

Ստանդարտների ազգային ֆոնդի արդիականացման նպատակով 2010 թ. երկրորդ եռամսյակում կատարվել է 610 միավոր ստանդարտի տեխնիկական մշակում (փոփոխություններ, լրացումներ, տեղեկություն չէրյալ հայտարարելու և փոխարինող ստանդարտների մասին) և վերաստուգում ըստ միջպետական ստանդարտի տեղեկատուի և գործող ԱՊՀ երկրների համար տեղեկատվական որոնման համակարգի:

1-ին կիսամսյակում Ազգային ֆոնդը համալրվել է 702 միջազգային (ԻՍՕ), 561 Եվրոպական (ԵՆ), 14 միջպետական (ԳՕՍՍ), 301 Ռուսաստանի Դաշնության (ԳՕՍՍ Ռ) և 34 Հայաստանի Հանրապետության (ՀՍՍ) ստանդարտներով:

Կատարվել է ֆոնդում առկա 1375 միավոր ստանդարտի տեխնիկական մշակում:

Ներկայումս նպատակ է դրվել ստանդարտացման ոլորտում ծավալել այնպիսի գործունեություն, որը կնպաստի Հայաստանի հեղինակության ու դերի բարձրացմանը միջազգային ստանդարտացման կազմակերպություններում: Աշխատանքներ են տարվում ազգային տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին շահագրգիռ կազմակերպությունների և անձանց ներգրավման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ինստիտուտը կնքել է 14 կազմակերպությունների հետ նոր բաժանորդագրման պայմանագրեր՝ **1680,0 հազ. դրամի**: Բաժանորդագրային տեղեկատվական սպասարկման աշխատանքների համար 2010թ. երկրորդ եռամսյակում ինստիտուտի հաշվարկային հաշվին փոխանցվել է **1590,0 հազ. դրամ**: Բաժանորդագրային տեղեկատվական սպասարկման արդյունքում կազմվել է 12 ակտ՝ **1560,0 հազ. դրամ**, հետևյալ կատարված աշխատանքների մասին:

✚ տեղեկատվության տրամադրում ազգային ֆոնդում միջազգային (ԻՍՕ, ԻԷԿ, ԵՆ), միջպետական (ԳՕՍՏ), Հայաստանի Հանրապետության (ՀԱՏ) և արտասահմանյան երկրների (այդ թվում՝ ԱՊՀ) ստանդարտների և այլ նորմատիվ փաստաթղթերի մասին,

✚ կազմակերպությունների ստանդարտների ֆոնդի արդիականացում,

✚ ՀՀ ստանդարտների ամենամյա կատալոգի, ստանդարտների և տեխնիկական պայմանների եռամսյակային տեղեկատուների տրամադրում,

✚ բաժանորդագրային անհրաժեշտ ազգային ստանդարտների անվճար տրամադրում (թվով 20),

✚ խորհրդատվություն ստանդարտացման և համապատասխանության հավաստման փաստաթղթերի վերաբերյալ:

Ստանդարտացման բաժնի կողմից իրականացվել է նաև տեղեկատվական սպասարկում ՀՀ պետական կառավարման մարմիններին, բոլոր կազմակերպություններին, ֆիզիկական անձանց և ստանդարտների ազգային ինստիտուտի ստորաբաժանումների շուրջ 1745 դիմողների համար: Նշված աշխատանքները իրականացվել են պետպատվերի շրջանակներում:

Ի կատարումն ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից կոլեգիայի 2010 թ. մայիսի 4-ի նիստի արձանագրությանը տրված՝ 2009 թվականում և 2010 թ. 1-ին եռամսյակում անվճար հիմունքներով տրամադրված ստանդարտների պահանջարկի ուսումնասիրության վերաբերյալ հանձնարարականի, հարկ ենք համարում նշել, որ Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից ուսումնասիրվել և վերլուծվել է 2009թ. և 2010թ. առաջին եռամսյակում անվճար հիմունքներով տրամադրված ստանդարտների պահանջարկը:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ ստանդարտների անվճար տրամադրման պահանջարկը ձևավորվել է հիմնականում ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից՝ հետևյալ ստանդարտների վերաբերյալ.

1. Միջազգային (ԻՍՕ) և Եվրոպական (ԵՆ) ստանդարտներ՝ շինարարական ապակիների վերաբերյալ (ՀՀ քաղաքաշինության նախարարություն),

2. Միջազգային (ԻՍՕ) ստանդարտներ՝ սննդամթերքի արտադրատեսակների ցուցանիշների փորձարկման մեթոդների վերաբերյալ (ՀՀ գյուղատնտեսության նախարարություն),

3. Միջազգային (ԻՍՕ) և միջպետական (ԳՕՍՏ) ստանդարտներ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության վերաբերյալ (Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ),

4. Միջազգային և Ռուսաստանի Դաշնության ստանդարտներ՝ աշխատանքի անվտանգության համակարգի վերաբերյալ (ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն).

5. Միջազգային (ԻՍՕ) ստանդարտներ՝ էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի, սննդային անվտանգության, որակի կառավարման և սննդային անվտանգության (ՀՀ էկոնոմիկայի նախարարություն):

Նշված ժամանակահատվածում անվճար տրամադրվել է 190 հատ միջազգային, եվրոպական և միջպետական ստանդարտ:

Միաժամանակ վերլուծությունը ցույց տվեց, որ առկա է եղել ստանդարտների պահանջարկի ոչ բավարար տրամադրում՝ մի շարք պետական կառավարման մարմիններին (ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն և այլն): Վերլուծության արդյունքում պարզվեց, որ հաշվի առնելով անվճար հիմունքներով ստանդարտների տրամադրման ընդհանուր պահանջարկը, պետական կառավարման մարմիններին այդ ստանդարտների վճարովի հիմունքներով տրամադրումը Ինստիտուտին կբերի տարեկան **շուրջ 6.0 մլն դրամ** եկամուտ՝ հաշվի չառնելով այդ ստանդարտների համար միջազգային ստանդարտացման կազմակերպություններին փոխանցվող ռոյալթիների արժեքը:

Ստանդարտների վաճառքը իրականացվում է պայմանագրային հիմունքներով՝ ըստ հաստատված գնահաշվարկի և տրված հաշիվ-ապրանքագրի կամ անդորրագրի: Ազգային ստանդարտների մեծ քանակով վաճառքի դեպքում կազմակերպության կողմից ներկայացվում է անհրաժեշտ ստանդարտների գնման վերաբերյալ հայտ և կնքվում է պայմանագիր: 2010թ. երկրորդ եռամսյակում իրականացվել է **285600 դրամի** ստանդարտների վաճառք: 2010թ. 1-ին կիսամյակում վաճառվել են **907,770 հազ. դրամի** ստանդարտներ:

Ինստիտուտը կատարել է 102 տեխնիկական պայմանների և 76 տեխնիկական պայմանների փոփոխությունների փորձաքննության աշխատանքներ: Ինստիտուտում ներդրված տեխնիկական պայմանների մշակման խորհրդատվությունը օգնում է միջին և փոքր ձեռնարկատիրությանը և անհատ ձեռներեցներին մշակել կոնկրետ տեսակի արտադրանքի համար տեխնիկական պայմաններ՝ համաձայն գործող նորմատիվ իրավական փաստաթղթերի և ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտների: Նման նորանվճարները պայմանավորված է ձևավորված զգալի պահանջարկով և այդպիսի ծառայություններ մատուցող որևէ այլ կազմակերպության բացակայությամբ: Արդյունքում Ինստիտուտի կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է շուրջ 60 կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար տեխնիկական պայմանների և դրանց փոփոխությունների մշակման խորհրդատվական աշխատանքներ: Հաշվետու եռամսյակում խորհրդատվական աշխատանքների վճարովի ծառայությունների գումարը կազմել է **3948,0 հազ. դրամ**:

1-ին կիսամյակում խորհրդատվական աշխատանքները իրականացվել են **6262,0 հազ. դրամի**: Տեխնիկական պայմանների փորձաքննության հիմնական նպատակն է համապատասխանեցնել կազմակերպության նորմատիվ փաստաթուղթը Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը, տեխնիկական կանոնակարգերին և ազգային ստանդարտներին: Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտը իրականացրել է տեխնիկական պայմանների փորձաքննության ծառայություն՝ **3720,0 հազ. դրամի**: 1-ին կիսամյակում փորձաքննության աշխատանքները իրականացվել են **6612,0 հազ. դրամի**:

«Ստանդարտ» տեղեկատվական որոնման համակարգի արդիականացման նպատակով համակարգչի միջոցով իրականացվել է ազգային ստանդարտների տվյալների բազայի մուտքագրում՝ հաշվի առնելով գործարկված 2010թ. Հայաստանի Հանրապետությունում բոլոր

միջազգային, միջպետական և եվրոպական ստանդարտները, ինչպես նաև չեղյալ հայտարարված և գործողությունը դադարեցված ազգային ստանդարտները:

Հաշվետու ժամանակահատվածում մուտքագրվել են էլեկտրոնային բազայում Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ դրված 18 ազգային ստանդարտների մատենագիտական տվյալները:

Կատարվել է նաև մուտքագրում թվով 18 ազգային ստանդարտներ ԻՊՍ (ИПС) որոնողական ծրագրում, որը հնարավորություն է տալիս տեղեկատվություն տրամադրել ԱՊՀ երկրներին ՀՀ-ում գործող ստանդարտների վերաբերյալ:

2010 թվականի առաջին կիսամյակում Հայաստանի Հանրապետության գործատուներին և մասնագետներին սպառիչ տեղեկատվություն ապահովելու համար նախապատրաստվել է հրատարակման «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» 2009թ. N4 եռամսյակային տեղեկատուն, N 1-2010 և N 2-2010 տեղեկատվական թերթիկները:

Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի (ազգային ստանդարտների և տեխնիկական պայմանների) գրանցումը, հաշվառումը իրականացվում է համաձայն «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի և ստանդարտացման ազգային համակարգի հիմնադրույթային ստանդարտների (ՀՍՍ 1.2-2001 և ՀՍՍ 1.3-95):

1-ին կիսամյակում գրանցվել է 88 Հայաստանի Հանրապետության (ՀՍՍ), 9 միջպետական (ԳՕՍՍ) և ՌԴ (ԳՕՍՍ Ռ) ստանդարտներ:

1-ին կիսամյակում պետական գրանցամատյանում գրանցվել է 166 տեխնիկական պայմաններ և 102 տեխնիկական պայմանների փոփոխություններ:

Ազգային ֆոնդը (շուրջ 20 հազար միավոր ստանդարտ) արդիականացնելու նպատակով 2-րդ եռամսյակում կատարել է ֆորմի վերաստուգման և ուսումնասիրության աշխատանքներ: Այդ աշխատանքները իրականացվել են մեքենաշինության ոլորտում օգտագործվող միջպետական ստանդարտների (ԳՕՍՍ) վերաբերյալ: Վերաստուգման և ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մի շարք ստանդարտներ, որոնք սահմանում են արտադրանքի կառուցվածքը և չափսերը արտադրությունում պահանջարկ չունեն շուրջ 15 տարի և կորցրել են իրենց արդիականությունը: Այդ ստանդարտները քննարկվել են մի շարք փոքր և միջին մեքենաշինական ձեռնարկությունների հետ, որի արդյունքում բաժնի մասնագետները առաջարկել են վերաստուգման ենթարկված շուրջ 715 միջպետական ստանդարտների գործողությունը դադարեցնել ՀՀ-ում:

Նույնատիպ աշխատանքներ իրականացվել են սննդարդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում:

Պարզվել է, որ այդ ստանդարտների պահանջարկը նշված ոլորտներում բացակայում է և սահմանված պահանջներն ու նորմերը հնացել են: Ինստիտուտի կողմից կազմվել է շուրջ 230 ստանդարտների ցանկ և ուղարկվել ՀՀ գյուղատնտեսության նախարարություն համաձայնեցման՝ այդ ստանդարտների գործողությունը ՀՀ-ում դադարեցնելու վերաբերյալ:

Միջպետական ստանդարտների գործողությունը դադարեցնելու հարցը պետք է ներկայացվի քննարկման գիտատեխնիկական խորհրդի նիստին:

3. Փորձարկման լաբորատորիաներ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտում գործել են 5 հավատարմագրված փորձարկման լաբորատորիա (Վանաձորի լաբորատորիայի գործունեությունը ժամանակավորապես կասեցված էր):

Ինստիտուտի փորձարկման լաբորատորիայում 1-ին կիսամյակում կատարվել է 392 փորձարկում և տրվել է 392 փորձարկման արձանագրություն:

Նշված ժամանակահատվածում աշխատանքային վիճակի են բերվել մի շարք լաբորատոր սարքավորումներ (բարձր արագության ցենտրիֆուգը, ջերմակարգավորիչ համալիրը, քրոմատագրման սպեկտրաչափը):

Երևանի նավթամթերքի փորձարկման լաբորատորիայում 1-ին կիսամյակում կատարվել է 596 փորձարկում, որից 55-ը բենզինի, 121-ը դիզելային վառելիքի, 314-ը յուղերի համար և տրվել է 596 փորձարկման արձանագրություն, 2-րդ եռամսյակում կատարվել է 286 փորձարկում, որից 27-ը բենզինի, 73-ը դիզելային վառելիքի, 195-ը յուղերի համար և տրվել է 286 փորձարկման արձանագրություն: 1-ին կիսամյակում տրվել է համապատասխանության 431 սերտիֆիկատ, կատարվել է 59 արտասահմանյան սերտիֆիկատների վերաձևակերպում, տրվել է համապատասխանության 54 հայտարարագիր և 2 մերժում:

Ֆիզիկաքիմիական փորձարկման լաբորատորիայում 1-ին կիսամյակում կատարվել է 105 պարարտանյութի փորձարկում և տրվել է 105 փորձարկման արձանագրություն: 2-րդ եռամսյակում կատարվել է 41 փորձարկում և տրվել է 41 փորձարկման արձանագրություն:

Ռադիոէլեկտրական սարքավորումների փորձարկման լաբորատորիայում 1-ին կիսամյակում կատարվել է 95 փորձարկում և տրվել է 95 փորձարկման արձանագրություն: 2-րդ եռամսյակում կատարվել է 48 փորձարկում:

Գյումրու փորձարկման լաբորատորիայում 1-ին կիսամյակում կատարվել է 377 փորձարկում և տրվել է 377 փորձարկման արձանագրություն: 2-րդ եռամսյակում կատարվում է 221 փորձարկում և տրվել է 221 փորձարկման արձանագրություն:

2010 թվականի 1-ին կիսամյակում իրականացվել է **54490,0 հազ. դրամի** փորձարկումներ:

Լաբորատորիաների խնդիրներից է բարձրակարգ ու երիտասարդ մասնագետների պակասը, որոնց ներգրավումը խոչընդոտվում է ցածր աշխատավարձերով:

Լուրջ խնդիր է նաև փորձարկման առկա սարքավորումների օգտագործման գծով անձնակազմի ուսուցման կազմակերպումը, ինչի համար կարիք կա ներգրավելու միջազգային փորձագետների: Լաբորատոր նյութերի ձեռք բերումը ևս խնդիրներ է առաջացնում, քանի որ մեծամասամբ կարիք է առաջանում բարձրակարգ նյութերը ներմուծել արտասահմանից:

Ներկայումս Ինստիտուտը՝

ա) ուսումնասիրում է լաբորատորիաների համար անհրաժեշտ սարքավորումների պահանջը, ինչի վերաբերյալ կներկայացվի առաջարկություն դրանց ձեռք բերման աղբյուրի և արժեքի վերաբերյալ,

բ) ուսումնասիրում է լաբորատորիաների անձնակազմին անհրաժեշտ դասընթացների պահանջը:

4. Համապատասխանության հավաստում

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կազմում հավատարմագրված սննդի և պարենային հուլմքի, ոչ պարենային ապրանքների, ծառայությունների և կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինները շարունակել են իրականացնել համապատասխանության հավաստման աշխատանքներ: Ինստիտուտի սերտիֆիկացման մարմինների գործունեության ծավալներն ամենախոշորն են հանրապետությունում՝ համեմատած մյուս մարմինների գործունեությանը: Այսպես,

ա) ոչ պարենային ապրանքների զծով տրվել են՝

	2010թ. II եռամսյակ	2010թ. I կիսամյակ
Համապատասխանության սերտիֆիկատ	727	1201
<i>այդ թվում՝</i>		
<i>ներմուծվող արտադրանքի</i>	702	1162
<i>տեղական արտադրանքի</i>	25	39
Համապատասխանության հայտարարագիր	268	480
<i>այդ թվում՝</i>		
<i>ներմուծվող արտադրանքի</i>	266	478
<i>տեղական արտադրանքի</i>	2	2
Համապատասխանության հսկողություն	7	15
Տեխնիկական պայմանների փորձաքննություն	11	13
Մերժված հայտեր	2	3

բ) սննդի և պարենային հուլմքի զծով տրվել են՝

	2010թ. II եռամսյակ	2010թ. I կիսամյակ
Համապատասխանության սերտիֆիկատ	525	930
<i>այդ թվում՝</i>		
<i>ներմուծվող արտադրանքի</i>	454	792
<i>տեղական արտադրանքի</i>	71	138
Համապատասխանության հայտարարագիր	197	357
<i>այդ թվում՝</i>		
<i>ներմուծվող արտադրանքի</i>	103	242
<i>տեղական արտադրանքի</i>	94	115
Դադարեցման և կասեցման որոշումներ	27	30
Համապատասխանության հսկողություն	30	42
Տեխնիկական պայմանների փորձաքննություն	11	13

գ) ծառայությունների սերտիֆիկացման գծով՝

	2010թ. II եռամսյակ	2010թ. I կիսամյակ
Համապատասխանության սերտիֆիկատ	94	159
Համապատասխանության հսկողություն	48	145

Կարևոր է նշել, որ համապատասխանության հավաստման աշխատանքների ծավալները զգալիորեն անկում են ապրել նախորդ տարիների համեմատ: Անկման պատճառ է հանդիսանում 2008թ. վերջում ՀՀ կառավարության որոշմամբ պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքների ցանկի կրճատումը, ինչպես նաև միջազգային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը հանրապետության ձեռնարկատիրական ակտիվության մակարդակի վրա:

Կառավարման համակարգերի սերտիֆիկացում

1-ին կիսամյակում ընդունել է որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացման 6 հայտ և 18 կազմակերպությունում իրականացրել է համապատասխանության հսկողություն, որից 2-րդ եռամսյակում ընդունել է որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացման 3 հայտ, 10 կազմակերպությունում իրականացրել է համապատասխանության հսկողություն և 9-ում՝ վերասերտիֆիկացում:

Մեկ աշխատակից մայիսի 14-22-ը մասնակցել է Կոպենհագենում կայացած ԻՍՕ 26000 ստանդարտի վերաբերյալ միջազգային կոնֆերանսին:

Նամակ-առաջարկներ է ուղարկվել 90-ից ավելի կազմակերպություններին էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացման վերաբերյալ:

Ինստիտուտի 6 աշխատակից հանձնել են «Սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի» փորձագետի որակավորման քննությունը և ԻՍՕ 19011 ստանդարտի պահանջներով որակավորվել են «Սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի» փորձագետ (աուդիտոր):

Կազմվել է սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնի հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերը և հայտը ու ներկայացրել հավատարմագրման գործակալություն:

Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության ամենամյա մրցանակաբաշխության մեթոդաբանությունը վերանայվում է արդարադատության նախարարության հետ:

Կառավարման համակարգերի բաժինը ստանդարտների հետազոտման և կիրառման բաժնի հետ համատեղ քննարկվել և կարծիք է ներկայացվել:

- ԻՍՕ/ՄԴ 14045 «Էկոլոգիական կառավարում. Արտադրանքի համակարգի էկոարդյունավետության գնահատում. Սկզբունքներ, պահանջներ և ուղեցույց» միջազգային ստանդարտի նախժագիծը,

- առաջարկություններ ուղղված արտադրանքի և ծառայությունների որակի ոլորտում ունեցած նվաճումների վերաբերյալ,

- «Ռիսկի կառավարում ԻՍՕ 31000 ստանդարտի կիրառման ուղեցույց» նոր աշխատանքային առաջարկի աշխատանքային հարցաթերթիկ:

2010թ. ներքին աուդիտի ժամանակացույցով իրականացվել է 2-րդ եռամսյակում նախատեսված ստորաբաժանումներում ներքին աուդիտ:

5. Ուսումնական կենտրոն

2010թ-ի 2-րդ եռամսյակում շարունակվել են Ուսումնական կենտրոնի զարգացման և միջազգային պահանջներին ներդաշնակ գործունեության ապահովման աշխատանքները:

Հիմնովին վերանայվել է, ըստ պահանջարկի նորացվել և տնօրենի հաստատմանն է ներկայացվել Կենտրոնում կազմակերպվող մասնագետների ուսուցման և վերապատրաստման ընդհանուր, ներածական և առանձին մասնագիտացումներով դասընթացների ցանկը:

Համաձայն հաստատված ցանկի Կենտրոնի ղեկավարը մշակել և տնօրենի հաստատմանն է ներկայացրել դասընթացների թեմատիկ պլանների փաթեթը: Դրան համապատասխան ստեղծվել է հայերեն և անգլերեն լեզուներով ուսումնական ծրագրերի բանկ՝ յուրաքանչյուր անվանում դասընթացի համար մշակվել է ուսումնական ծրագիր և տեղակայվել ինստիտուտի ՎԵԲ կայքում: Այս ձևով իրազեկումը նպաստել է ունկնդիրների ճիշտ կողմնորոշմանը և հետաքրքրող ոլորտի ճիշտ ընտրությանը: Վերանայվել են յուրաքանչյուր դասընթացի համար մշակված և ունկնդիրներին տրամադրվող նորմատիվ-մեթոդական փաստաթղթերի փաթեթները (առաջնահերթ՝ ընդհանուր դասընթացի փաթեթը), մշակվել են նոր փաթեթներ:

Դասընթացներն անցկացվել են սլայդների ցուցադրմամբ և թրեյնինգի միջազգային պրակտիկայում կիրառվող ինտերակտիվ մեթոդներով:

Հաշվետու եռամսյակում ՀՀ 23 կազմակերպությունից ստացված նամակների և հայտերի համաձայն՝ 7 խմբի 53 ունկնդրի համար կազմակերպվել է համապատասխան ուսուցում և վերապատրաստում: Վերապատրաստումը գնահատվել է 7 թեսթավորման արդյունքներով, ունկնդիրներին հանձնվել են վկայականներ՝ սահմանված կարգով գրանցելով գրանցամատյաններում:

2010թ-ի առաջին եռամսյակի արդյունքների համեմատ դիտարկվել է ունկնդիրների թվի աճ (53 ունկնդիր 40-ի փոխարեն), գրանցվել է հայտատու-կազմակերպությունների գործունեության ոլորտի և թվի աճ (37 կազմակերպություն 14-ի փոխարեն):

Ընդհանուր հաշվով 2010թ.-ի առաջին կիսամյակում Կենտրոնում 11 խմբում վերապատրաստվել են 37 կազմակերպություն ներկայացնող 93 ունկնդիր և ՀՀ բուհերի 9 ուսանող: Ուսուցումը գնահատվել է 11 թեսթավորման արդյունքներով, իսկ ունկնդիրների բավարարվածությունը ուսուցումից՝ գնահատման թերթիկների միջոցով:

Հաշվետու եռամսյակում կազմակերպվել է փորձագետների որակավորման 2 թեսավորում և 1 հարցազրույց, որին մասնակցել են ՀՀ 6 կազմակերպության 13 հավակնորդ, այդ թվում 6-ը Ստանդարտների ազգային ինստիտուտից անվճար հիմունքներով:

Համապատասխանության գնահատման բնագավառում փորձագետների որակավորման հանձնաժողովի որոշմամբ 13 հավակնորդի հանձնվել է տարբեր ոլորտների փորձագետների 16 վկայագիր, գրանցելով Ստանդարտների ազգային ինստիտուտի էլեկտրոնային կայքում և գրանցամատյանում:

Ընդհանուր հաշվով 2010թ-ի առաջին կիսամյակում կազմակերպվել է փորձագետների որակավորման 3 թեսավորում և 2 հարցազրույց, որի արդյունքում ՀՀ 6 կազմակերպության 21 հավակնորդի հանձնվել է տարբեր ոլորտների փորձագետների 30 վկայագիր: Ստանդարտների ազգային ինստիտուտի ՎԵԲ կայքում առանձնացվել է ինստիտուտի վկայագրված փորձագետների ցանկը:

Կարևորելով ՀՀ բուհերի հետ համագործակցությունը, Կենտրոնի ղեկավարը շարունակել է Հայաստանի պետական տնտեսագիտական և Հայաստանի պետական ագրարային համալսարանների տարբեր ֆակուլտետների ուսանողներին տրամադրել դասընթացների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն: Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնի պետը մասնակցել է ստորև թվարկվող սեմինարներին և սեմինար-քննարկումներին.

✚ «Սննդամթերքի անվտանգության ապահովման առանձնահատկությունները տնտեսական ճգնաժամի պայմաններում» թեմայով ՀՀ էկոնոմիկայի նախարարության նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնում՝ արվել է 2 զեկույց (Երևան, 2010թ., 11 մարտի)

✚ Սոցիալական պատասխանատվության ԻՍՕ 26000 ստանդարտի պահանջները. ԻՍՕ/ՍԱՐՄ ազգային սեմինար (Երևան, 2010թ., 25-26 մարտի),

✚ «Ստավոր սեփականությունը բիզնեսի համար» թեմայով ՀՀ էկոնոմիկայի նախարարության նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնում՝ Ստավոր սեփականության գործակալության և հրատարակիչների ազգային ասոցիացիայի հետ համատեղ (Երևան, 2010թ., 26 ապրիլի),

✚ «Հայաստանի տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների մոտարկում Եվրամիության կանոնակարգերին և ստանդարտներին» թեմայով (Աղվերան, 2010թ., 13-15 մայիսի),

✚ «Բիզնեսի կառավարման ժամանակակից տեխնոլոգիաները և գործիքները» թեմայով ՀՀ էկոնոմիկայի նախարարության նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնում (Երևան, 2010թ., 29 հունիսի):

Երկրորդ եռամսյակի և առաջին կիսամյակի գործունեության վերլուծությունը թույլ է տալիս արձանագրելու Կենտրոնում առկա հետևյալ խնդիրները.

- Իրականացվող բոլոր գործընթացների շարունակական բարելավումը և հզորացումն ապահովելու նպատակով Կենտրոնի անձնակազմի համալրում ոչ ավանդական ուսուցման մեթոդներին, միջոցներին և գործիքներին տիրապետող ու պատրաստված թրեյներներով:

- Անձնակազմի ընդլայնումից հետո, թրեյներների պարտականությունների վերաբաշխում՝ նշանակելով առանձին ուղղություններով պատասխանատուներ, յուրաքանչյուրին վերապահելով վստահված ուղղության զարգացումը և հսկողությունը:

- Միջազգային փորձին և գործելակերպին, նորամուծություններին հաղորդակից դարձնելու նպատակով՝ միջազգային թրեյներների միջոցով Կենտրոնի անձնակազմի համար թրեյնինգների կազմակերպում:

- Կենտրոնի ճանաչման և վարկանիշի բարձրացման նպատակով տարբեր ոլորտների ունկնդիրների համար տեղեկատվական սեմինարների, քննարկումների սկիզբ դրված գործընթացների շարունակում:

- Հայտատու-կազմակերպությունների պահանջարկի և առաջարկների, գնահատականների հիման վրա թրեյնինգների ուսումնամեթոդական փաստաթղթերի փաթեթների և գործընթացների շարունակական բարելավում:

6. Ինստիտուտի հիմնական գործունեությանն առնչվող այլ աշխատանքներ

Ի կատարումն ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2010 թվականի ապրիլի 21-ի N297-Ա հրամանի, ապահովվել է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ հաշվեկշռից «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հաշվեկշռին վերջինիս կողմից տարիներ շարունակ փաստացի օգտագործվող գույքի հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը:

Հաշվետու եռամսակում Ինստիտուտն աշխատանքներ է իրականացրել կադրային ու փաստաթղթաշրջանառության գործունեության կազմակերպման ոլորտում, ինչը կապված էր ընկերության վերակազմավորման աշխատանքների հետ:

Ներկայումս աշխատանքներ են տարվում բոլոր հաստիքների նոր պաշտոնեական հրահանգների և բոլոր ստորաբաժանումների գործունեության կանոնակարգերի մշակման ուղղությամբ: Մշակվել է նաև Ինստիտուտի ներքին կարգապահական կանոնների և Ինստիտուտում փաստաթղթաշրջանառության կարգի նախագծերը:

Ֆիզիկաքիմիական և նավթամթերքի փորձարկման լաբորատորիաներում կատարվել է վերանորոգում, ամրացվել և վերանորոգվել է մասնաշենքի տանիքը, լաբորատոր սարքավորումները միացվել են հողանցման կոնտուրի հետ:

Բացի ընթացիկ գործունեությունից, հաշվետու ժամանակաշրջանի ձեռք բերումներ կարելի է համարել, մասնավորապես, փորձագետների թեստավորման քննությունների համակարգչային ծրագրի զգալի բարելավումը և նոր տվյալների համալրումը, համապատասխանության հավաստման և ձևակերպման նոր համակարգչային ԻՊՍ-ստանդարտ ծրագրի համալրումը և ինտերնետի երկու այլընտրանքային կապով ապահովումը:

Երկու քաղաքացիական գործով ներկայացվել է Ինստիտուտի շահերը երևանի և Շիրակի մարզի դատական ատյան: Գործընթացը շարունակելի է: